Հ ա ս տ ա տ վ ա ծ է

Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի " " 2017թ. նիստում արձ. թիվ "

Ամբիոնի պետ

10.10.2017թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ վարչական վարույթ և վարչական դատավարություն
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն

ԱՄԲԻՈՆ		Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոն mzanc4@gmail.com
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոն mzanc4@gmail.com
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ **ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ**		ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի հեռակա ֆակուլտետի 6-րդ և 7-րդ կիսամյակ, բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		**1(մեկ)**
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ և ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԱՎԵՐԸ		«ՀՀ վարչական վարույթ և վարչական դատավարություն» առարկայի ընդհանուր ծավալը կազմում է 14 ժամ, որից 10-ը դասախոսություն, 2 սեմինար, 2 գործնական, Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է եզրափակիչ գնահատմաբ:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «ՀՀ վարչական վարույթ և վարչական դատավարություն», առարկայի իմացության վրա:

ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿ		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևաորել կարողություններ վարչարարության հիմունքների, վարչական վարույթի և վարչական դատավարության վերաբերյալ:
ԽՆԴԻՐ/ՆԵՐ		Դասընթացի խնդիրներն են՝ • ներկայացնել վարչարարության, վարչական վարույթի հասկացությունը, առարկան, համակարգը և խնդիրները, • ուսումնասիրել վարչարարության սկզբունքները, • սահմանել վարչական վարույթի և վարչական դատավարության հասկացությունը, • վեր հանել ժամանակի ընթացքում և տարածության մեջ վարչական իրավախախտումների գործողության առանձնահատկությունները, • ներկայացնել վարչական իրավախախտումների հասկացությունն ու տեսակները, • ներկայացնել վարչական դատավարության հասկացությունը, տարրերն ու հատկանիշները, և ուսումնասիրել ապացույցները վարչական դատավարությունում • վարչական պատասխանատվությունն ու դրա հիմքը, • ներկայացնել վարչական դատավարության փուլերը և դրանց տարբերիչ հատկանիշները,
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ		

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ **1.իմանա**		ա) Վարչարարության բնութագիրը բ) ՀՀ վարչական վարույթի բնութագիրը և փուլերը գ)ՀՀ վարչական վարույթի տեսակները դ)Վարչական ծախսեր և գործերի հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները ե) Վարչական դատավարության բնութագիրը զ) Ապացույցները վարչական դատավարությունում է)Դատավարական ժամկետներ,դատական ծախսեր և ծանուցումներ թ)Վարչական դատավարության փուլերը Ժ)Հատուկ վարույթներ վարչական դատավարությունում: Վարչական դվարույթի և դատավարության վերաբերյալ միջազգային փորձը:
2.կարողանա		ա) ընկալել Վարչարարության, վարչական վարույթի և դատավարության նշանակությունը, բ) քննարկումներ և բանավեճեր անցկացնել վարչական վարույթի կարգավորման առարկայի, դրա նորմերի գործնական իրականացման կառուցակարգերի և առաջադրվող այլ հարցերի շուրջ, գ) գնահատել վարչարարության ոլորտում առկա խնդիրները և տալ դրանց ճիշտ լուծումները, դ) վերլուծել ՀՀ վարչական դատական համակարգի տարրերից յուրաքանչյուրի կազմակերպման, իրավական դրության և գործունեության իրավական կարգավորման վիճակը, ընդունված ակտերի իրավակիրառ պրակտիկան և կատարելու

3.տիրապետի		համապատասխան առաջարկություններ: ե) վերլուծել վարչական դատավարության ինստիտուտի տարրերը: ա) Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի կառուցակարգերի մեկնանաբանման մեթոդաբանությանը, բ) մարդու իրավունքների պաշտպանության դատավարական պահանջներին,

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1.”Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին” ՀՀ օրենք 18.02.2004թ. 2.Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրք 05.12.2013թ. 3.Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք 21.02.2007թ. 4.Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք 06.12.1985թ.

Լրացուցիչ		1. Գ.Իսրաելյան ″Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք″ ընդհանուր մաս, Երևան ″Աստղիկ գրատուն″ 2015թ. 2. Գ.Իսրաելյան ″Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք″ դասախոսությունների և խնդիրների ժողովածու, Երևան ″Աստղիկ գրատուն″ 2016թ. 3.″ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին″ ՀՀ օրենքի վերաբերյալ հարցեր և պատասխաններ հեղինակ Հ.Թովմասյան Երևան ″Տիգրան մեծ″ 2015թ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Բաղադրիչ 1(Միջանկյալ 1) Բաղադրիչ 2 (Միջանկյալ 2՝) Բաղադրիչ 3 (ամփոփիչ քննություն՝ առկայության դեպքում)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար», «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:

Ներկայություն		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ**		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄՔԱՐՏԵԶ

Թեմա 1. Վարչարարության բնութագիրը: Վարչական վարույթի

բնութագիրը : (2-**ժամ դասախոսություն**)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչարարության հասկացությունը և հիմնական հատկանիշները: 2. Վարչարարության հիմնարար սկզբունքները: 3. Վարչարարության և վարչական վարույթի հարաբերակցությունը: 4. Վարչարարությամբ պատճառած վնասի համար պատասխանատվության էությունը, վնասը հատուցելու կարգն ու պայմանները: 5. Վարչական մարմիններ: 6. Գործերի ենթակայությունը վարչական մարմիններին: 7. Վարչական մարմինների փոխօգնության հիմքերը և իրականացման կարգը: 8. Վարչական մարմինների գործունեության ձևերն ու մեթոդները: 9. Օրինականության ապահովումը վարչական մարմինների գործունեության մեջ: 10. Վարչական վարույթի հասկացությունը և հատկանիշները: 11. Վարչական վարույթի նպատակը, բովանդակությունը, մասնակիցները և օբյեկտը: 12. Վարչական վարութային նորմեր և հարաբերություններ: 13. Վարչական վարույթի ժամկետները. ժամկետը երկարաձգելու հիմքերը և կարգը: 14. Բացարկը և ինքնաբացարկը վարչական վարույթում: 15. Վարչական վարույթի կասեցման և	Հարցեր 1-9 – անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Հարցեր 10-15 – ինքնուրույն աշխատանք. Ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:

կարճման հասկացությունը, հիմքերը և կարգը:	

Թեմա 2. Վարչական վարույթի փուլերը և տեսակները (2 **ժամ ընդհանուր ժամաքանակը** 2 **դասախոսություն**)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչական վարույթի փուլի հասկացությունը, հատկանիշները և տեսակները: 2. Վարչական վարույթի հարուցման փուլը: Վարչական վարույթ հարուցելու հիմքերը և կարգը: 3. Վարչական վարույթի ընթացիկ փուլը: 4. Գործի հանգամանքների պարզաբանմանն ուղված գործողությունները: 5. Ապացույցները վարչական վարույթում: Ապացույցների հասկացությունը և տեսակները: Ապացուցման պարտականությունը վարչական վարույթում: 6. Վարչական վարույթի եզրափակիչ փուլը: Վարչական ակտի հասկացությունը, հատկանիշները: 7. Վարչական ակտի տեսակները: 8. Վարչական ակտի ընդունման կարգը և ընդունման մասին իրազեկումը: 9. Ակտի ուժի մեջ մտնելը: 10. Առ ոչինչ վարչական ակտը, ակտն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու հիմքերը, կարգը և հետևանքները:	Հարցեր 1-12 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման եղանակով: Ուսանողները նախօրոք ուսումնասիրում են քննարկվող նյութը և ներկայացնում խնդրահարույց հարցերը: Հարցեր 7-ից – 18-ը - Սովորողները նախապես ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, ուսումնասիրում են վարչարարությանը վերաբերող խնդիրները:

11. Իրավալիազորող վարչական վարույթները Հայաստանի Հանրապետությունում: 12. Պետական գրանցման վարույթներ: 13. Իրավապահ վարչական վարույթներ Հայաստանի Հանրապետությունում: 14. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի առանձնա-հատկությունները: 15. Բողոքարկման վարույթի էությունը: 16. Վարչական մարմնի գործողության կամ անգործության, վարչական ակտի բողոքարկման հիմքերը, կարգը, ժամկետները և հետևանքները: 17. Վարչական ակտի հարկադիր կատարման վարույթը: 18. Հարկադրանքի միջոցների էությունը և տեսակները:	

Թեմա 3. Վարչական ծախսեր: Վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատ-յանների վարման կարգն ու պայմանները (2 **ժամ ընդհանուր ժամաքանակը** 2 **դասախոսություն**)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչական ծախսերի հասկացությունը և տեսակները:	Հարցեր 1-6 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում

2. Փորձագետի վարձատրության պայմանները: 3. Թարգմանչի վարձատրության պայմանները: 4. Վկային վճարումներ կատարելու պայմանները: 5. Գիշերավարձի և օրապահիկի ծախսերը: 6. Վճարումներ կատարելու կարգը: 7. Վարչական վարույթի վերաբերյալ գործերի վարման կարգը: 8. Վարչական վարույթի վերաբերյալ գործերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգը: 9. Վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգը:	ուսանողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին: Հարցեր 1-6 – ինքնուրույն աշխատանք: Թեմայի նշված հարցերն ընդհանուր գծերով մատուցվել է ուսանողներին «Վարչական վարույթ և վարչական դատավարություն » առարկայից: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը՝ վարչաիրավական առումով ընկալելու քննարկվող հարցերի բովանդակությունը: Սովորողը նախապատրաստվում է դասախոսի նախապես հանձնարարված մասնագիտական գրականության համապատասխան էջերը ուսումնասիրելով:

Թեմա 4. Վարչական դատավարության բնութագիրը: Վարչական դատավարության փուլերը: Ապացույցները վարչական դատավարությունում: (4 **ժամ ընդհանուր ժամաքանակը** 2 **դասախոսություն** 2 **գործնական**)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Վարչական դատավարության բնութագիրը: 2. Վարչական դատարանի հասկացությունը և հատկանիշները: 3. Վարչական դատավարությանը մասնակցող անձինք և նրանց կարգավիճակը:	Հարցեր 1-23 - անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման միջոցով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են դասագրքում ներկայացված թեմայի հիմնադրույթներին և խնդրահարույց

4. Ներկայացուցչությունը վարչական դատավարությունում: 5. Վարչական դատավարության փուլերի ընդհանուր բնութագիրը: 6. Գործի հարուցումը վարչական դատարանում: Հայցի հասկացությունը և տեսակները: Հայց ներկայացնելու կարգը: 7. Գործը դատաքննությանը նախապատրաստելու կարգը: 8. Դատաքննությունը վարչական դատարանում: 9. Արագացված դատավարություն: 10. Վարչական դատարանի դատական ակտերի հասկացությունը և տեսակները: 11. Վարույթը վերաքննիչ դատարանում: Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք. բողոք բերելու ժամկետները, կարգը, բողոքը հետ վերցնելը: 12. Գործի քննության ժամկետը և կարգը վերաքննիչ դատարանում: 13. Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված բողոք-ների քննությունը: 14. Վարույթը վճռաբեկ դատարանում: Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք. բողոք բերելու ժամկետները, կարգը: 15. Գործի քննությունը վճռաբեկ դատարանում: 16. Վերադաս դատարանի կողմից բեկանված գործն ըստ էության լուծող դատական ակտով գործերի նոր քննությունը: 17. Դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթ: 18. Դատական ակտերի հարկադիր կատարումը: 19. Ապացույցների հասկացությունը, հատկանիշները և ապահովումը:	հարցերը ներկայացնում քննակման: Հարցեր 6-ից - 12-ը - գործնական պարապմունք: Ուսանողները նախօրոք ծանոթանում են հանձնարարված գրականությանը, իրավական ակտերին և քննարկում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերը: Ստուգվում են ընթացիկ առաջադրանքները, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ: Հարցեր 12-ից – 23-ը - ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, վեր են հանում խնդրահարույց հարցերը, որոնք քննարկվում են գործնական պարապմունքի ժամանակ:

20. Ապացուցման ենթակա հանգամանքները վարչական դատավարությունում: 21. Ապացույցների տեսակները: 22. Վկայի ցուցմունքը, փորձագետի ցուցմունքը, գրավոր և իրեղեն ապացույցները: 23. Ապացուցումը վարչական դատավարությունում:	

Թեմա 5. Հատուկ վարույթները վարչական դատավարությունում: (2 **ժամ ընդհանուր ժամաքանակը** 2 **դասախոսություն**)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հատուկ վարույթի էությունը և տեսակները: 2. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթ: 3. Հավաքի անցկացման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթ: 4. Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթ: 5. Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթ: 6. Նոտարական գործողությունների վիճարկման վերաբերյալ գործերի վարույթ:	Դասախոսություն՝ ուսանողների ակտիվ ներգրավմամբ, խմբային քննարկման ձևով: Ուսանողները նախօրոք ծանոթանում են քննարկվող հարցերի վերաբերյալ գրականությանը և հետաքրքրություն ներկայացնող հարցերը առաջադրում քննարկման: